

Yerevan

05 November, 2018

ք. Երևան

5 նոյեմբերի, 2018 թ.

British Council Armenian Branch, hereinafter referred to as «the Donor», represented by the Director Ms Arevik Saribekyan, acting pursuant to the Power of Attorney dated 19 June 2018, on one side, and Embassy of the Italian Republic in Armenia represented by Mr.VINCENZO DEL MONACO, Ambassador, hereinafter referred to as «the Beneficiary», on the other side, together hereinafter referred to as «the Parties», have signed this agreement (hereinafter referred to as «the Agreement») as follows.

Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ՝ «Չովանավոր»), ի դեմս՝ տնօրեն Արևիկ Սարիբեկյանի, որ գործում է 2018 թ.-ի հունիսի 19-ով թվագրված լիազորագրի հիման վրա, մի կողմից, և Իտալիայի Հանրապետության դեսպանությունը Հայաստանում, (այսուհետ՝ «Շահառու»), ի դեմս՝ դեսպան պ-ն ՎԻՆՉԵՆՑՈ ԴԵԼ ՄՈՆԱԿՈՅԻ մյուս կողմից՝ միասին այսուհետ հիշատակվող որպես «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ «Համաձայնագիր») հետևյալի մասին:

1. Subject of the agreement

- 1.1 The purpose of the Agreement is to award a donation to the Beneficiary for organizing thematic events within the framework of the European Film Festival, which will be held in Yerevan on November 17-27, 2018.
- 1.2 The Beneficiary will be awarded the donation on the terms and conditions set forth in the Agreement. By signing the Agreement, the Beneficiary declares that it has noted and accepted provided terms and conditions.

1. Համաձայնագրի առարկան

- 1.1 Չովանավորը կհատկացնի նվիրատվություն Շահառուին՝ կազմակերպել թեմատիկ միջոցառումներ Երևանում 2018 թ.-ի նոյեմբերի 17-ից 27-ը անցկացվող Եվրոպական ֆիլմերի փառատոնի շրջանակում:
- 1.2 Նվիրատվությունը կտրամադրվի Շահառուին Համաձայնագրում նշված ժամկետների ու պայմանների համաձայն: Համաձայնագիրը ստորագրելով Շահառուն կհաստատի, որ ծանոթացել ու ընդունել է այդ պայմանները:

2. Terms of payment

- 2.1 The amount of the Donation is 1,000 EUR in AMD equivalent, which is AMD 559,500 (five hundred fifty nine thousand five hundred) according to the RA CBA exchange rate as of 05.11.2018.
- 2.2 The Donation will be transferred to the Beneficiary's bank account
- 2.3 The Beneficiary will be responsible for any taxes and any other state duties resulting from this Agreement.

2. Վճարման պայմանները

- 2.1 Նվիրատվության գումարը կազմում է 1,000 եվրոյին համարժեք դրամ, որը կազմում է 559,500 (հինգ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն ՀՀ ԿԲ-ի 05.11.2018 փոխարժեքին:
- 2.2 Նվիրատվության գումարը կփոխանցվի Շահառուի բանկային հաշվին:
- 2.3 Շահառուն պատասխանատու է սույն Համաձայնագրից ծագած հարկային և այլ պետական վճարումների համար:

3 Final provisions

- 3.1 The Agreement shall enter into force upon signing thereof by the authorized representatives of the Parties and shall remain in force until 28 November 2018 inclusive.
- 3.2 The British Council believes that all children have potential and that every child matter – everywhere in the world. The British Council affirms the position that all children have the right to be protected from all forms of abuse as set out in article 19, UNCRC 1989.
<https://www.britishcouncil.org/organisation/transparency/policies/child-protection>

3. Եզրափակիչ դրույթներ

- 3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թ.-ի նոյեմբերի 28-ը, ներառյալ:
- 3.2 Բրիտանական խորհուրդը հավատում է, որ բոլոր երեխաներն ունեն ներուժ և, որ յուրաքանչյուր երեխա կարևոր է ու նշանակալից աշխարհի ցանկացած անկյունում: Բրիտանական խորհուրդը հաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ բոլոր երեխաներն իրավունք ունեն պաշտպանված լինել շահագործման դրսևորումներից, ինչպես հաստատված է 1989 թվականի Միավորված ազգերի՝ երեխաների իրավունքների կոնվենցիայի 19 հոդվածում:
<https://www.britishcouncil.org/organisation/transparency/policies/child-protection>

- 3.3 The British Council has an Equality, diversity and

- 3.3 Բրիտանական խորհուրդը որդեգրել է հավասարու-

inclusion policy that prohibits unjustifiable discrimination on the grounds of gender, marital status, sexual identity, religious belief, political opinion, race, work pattern, age, disability or HIV/AIDS status, socio-economic background, past convictions, trade union activity or membership, or on the basis of having or not having dependants. Our Equality, diversity and inclusion policy forms part of your partnership with the British Council, and we expect all our partners to respect its principles in carrying their work with the British Council. For more information on our Equality, diversity and inclusion policy and our work in these areas please visit

<https://www.britishcouncil.org/organisation/transparency/policies/equality-diversity-inclusion>

3.4 Any amendments and supplements to the Agreement are valid if made in writing, signed and sealed by the Parties.

3.5 The Agreement is made in two equal copies in the Armenian and English languages. In the event of a conflict between the two versions, the Armenian version shall prevail.

4. The Parties of the Agreement

The Donor / Հովանավոր

Բրիտանական Խորհուրդ Հայաստանյան մասնաճյուղ
British Council Armenian Branch office
Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 9
Address: 9 Alek Manoukyan., Yerevan, RA
Բանկային հաշիվ՝ / Bank account: 001-146026-050,
Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան / HSBC Armenia



(ստորագրություն / signature)

Արևիկ Սարիբեկյան / Arevik Saribekyan
Տնօրեն / Director

թյան, բազմազանության և ներառման քաղաքականություն, ըստ որի արգելվում է խտրականությունը սեռի, ընտանեկան կարգավիճակի, սեռական ինքնության, կրոնական հավատքի, քաղաքական ուղղվածության, ազգային պատկանելիության, աշխատանքային ձևի, տարիքի, հաշմանդամության կամ ՄԻԱՎ/ՉԻԱՀ կարգավիճակի, սոցիալ-դատվածության, արհմիության անդամության կամ գործունեության, կամ խնամառուների առկայության կամ բացակայության հիման վրա: Մեր հավասարության, բազմազանության և ներառման քաղաքականությունը կազմում է Բրիտանական խորհրդի հետ Ձեր համագործակցության կարևոր մաս, և մենք ակնկալում ենք մեր գործընկերների նվիրվածությունը վերոհիշյալ սկզբունքներին Բրիտանական խորհրդի հետ համատեղ իրականացվող ծրագրերում: Հավասարության, բազմազանության և ներառման քաղաքականության և այս ասպարեզում մեր կատարած աշխատանքի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ այցելելով հետևյալ կայքը

<https://www.britishcouncil.org/organisation/transparency/policies/equality-diversity-inclusion>


3.4 Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները օրինական ուժ ունեն, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, երկկողմանի ստորագրված և կնքված են:

3.5 Համաձայնագիրը կազմված է հայերեն և անգլերեն՝ երկու հավասարազոր օրինակից: Հակասությունների դեպքում գերակայում է հայերեն օրինակը:

4. Համաձայնագրի Կողմերը

The Beneficiary / Շահառու

Իտալիայի Հանրապետության դեսպանություն
Embassy of the Italian Republic in Armenia
Հասցե՝ ք. Երևան, Իտալիայի փող.5
Address: 5, Italian Street., Yerevan, RA
Բանկային հաշիվ՝ / Bank account: 001027291050,
Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան / HSBC Armenia



(ստորագրություն / signature)

Vincenzo Del MONACO/Վինչենցո Դել Մոնակո
ՀՀ Իտալիայի դեսպան